



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք, գ. Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 փետրվարի 2023 թվականի N 35 - Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԿԱՄՈ ՌԱԶՄԻԿԻ ՀԱԿՈՔՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ, 08-081-0002-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱՏԵԼԻ ՏԱՆ
ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 62-րդ և 64-րդ կետերով և հիմք ընդունելով քաղաքացի Կամո Ռազմիկի Հակոբյանի 2023 թվականի փետրվարի 3-ի Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը, **որոշում եմ.**

Քաղաքացի Կամո Ռազմիկի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող, 08-081-0002-0004 կադաստրային ծածկագրով բնակելի տունը (վկայական N 02022023-08-0063) վերահասցեավորել և տրամադրել նոր հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գ. Մեծ Սեպասար, 12-րդ փողոց, բնակելի տուն 3:

2. Չեղյալ համարել նախկինում տրված «Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գ. Մեծ Սեպասար, 12-րդ փողոց, բնակելի տուն 7» հասցեն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**



2023 թվականի փետրվարի 3
գյուղ Աշոցք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2023 թվականի N 36 - Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ԳՅՈՒՂԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 7,52459 ՀԵԿՏԱՐ (3-ՐԴ ԿԱՐԳԻ
ԱՐՈՏ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 08-085-0031-0001-ԻՑ) ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ԳՅՈՒՂԻ
ԲՆԱԿԻՉ ՍԵՐՅՈՒԺԱ ՇՈՒՐԱՅԻ ՀԱԿՈՐՅԱՆԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Նախկին Սարապատ համայնքի ղեկավարի և Սերգեյ Շուրայի Հակոբյանի միջև 2019 թվականի հունիսի 11-ին կնքվել է արոտավայրից (3-րդ կարգի արոտ, կադաստրային ծածկագիր՝ 08-085-0031-0001-ից) օգտվելու պայմանագիր, որի գործողության ժամկետը լրացել է՝ 2022 թվականի հունիսի 11-ին:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին, 2-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Մուսայելյան գյուղի բնակիչ Սերյոժա Շուրայի Հակոբյանի 2023 թվականի փետրվարի 6-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը և հաշվի առնելով որ Սերգեյ Շուրայի Հակոբյանը մինչ օրս բարեխղճորեն ու լրիվ ծավալով կատարել է իր՝ օգտվելու պարտականությունները, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մուսայելյան գյուղում վարչական տարածքում գտնվող Աշոցք համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 7,52459 հեկտար (3-րդ կարգի արոտ, կադաստրային ծածկագիր՝ 08-085-0031-0001-ից) երեք տարի ժամկետով, տարեական 30100 (երեսուն հազար հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ վճարով օգտագործման տրամադրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մուսայելյան գյուղի բնակիչ Սերգյոժա Շուրայի Հակոբյանին (անձնագիր՝ AU0202965, տրված՝ 18.03.2021թ., 034-ի կողմից)՝ արոտ կազմակերպելու նպատակով:

2. Քաղաքացի Սերյոժա Շուրայի Հակոբյանի հետ կնքել արոտից օգտվելու պայմանագիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՅՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

